Ընդունված է
Արթիկի պետական քոլեջի
Ուսանողական խորհրդի
Ընդհանուր ժողովի թիվ 1 որոշմամբ
ՈՒխ – ի նախագահ՝ _____
«29» 07 2021թ.

Հաստատված է՝
Արթիկի պետական քոլեջի
տնօրեն՝ Ա.Ղուլիջանյան
_____
«29» 07 2021թ.

# ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արթիկ
2021թ.

# «ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողական խորհուրդը[1] կամավորության սկզբունքով ձևավորվող, ինքնակառավարվող, ընտրովի, ներկայացուցչական, հասարակական հիմունքներով գործող, ապաքաղաքական և ապակուսակցական ուսանողական մարմին է:

2. Ուսանողական խորհուրդն ստեղծվում է, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի[2] ուսանողների ընդհանուր ժողովի[3] որոշմամբ:

3. Ուսանողական խորհուրդը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

4. Ուսանողական խորհրդի անվանումն է՝

1) հայերեն՝ Արթիկի պետական քոլեջի ուսանողական խորդհուրդ,

2) անգլերեն՝ Student Council of the Artik state college:

5. Ուսանողական խորհուրդը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Ուսանողական խորհրդի կառուցվածքում կարող են ստեղծվել ստորաբաժանումներ:

7. Ուսանողական խորհրդի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 3001, ք.Արթիկ, Տոնականյան 31:

## II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Ուսանողական խորհրդի նպատակներն են՝

1) արտահայտել և պաշտպանել ուսանողների իրավունքներն ու շահերը, աջակցել ուսանողների կարիքների ապահովմանը Քոլեջում,

2) ապահովել ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարմանը,

3) ապահովել քոլեջում ուսանողական ինքնավարության և ինքնակառավարման գործընթացների ծավալումն ու զարգացումը,

4) նպաստել ուսանողների մտավոր, ստեղծագործական, մշակութային, հոգևոր, ֆիզիկական, ինչպես նաև սոցիալական ակտիվության զարգացմանը,

9. Ուսանողական խորհրդի խնդիրներն են՝

1) ապահովել ուսանողների իրազեկվածությունը Քոլեջում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) ապահովել ուսանողների իրազեկվածությունը Քոլեջի կառավարման, իրականացվող կրթական գործընթացների վերաբերյալ,

3) մասնակցել Քոլեջում կրթական գործընթացների կազմակերպմանը և վերահսկողությանը,

4) մասնակցել Քոլեջում կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին ինչպես նաև նախաձեռնել այդպիսիք,

5) նպաստել ուսանողական առօրյայի, հանգստի և ժամանցի կազմակերպմանը,

---

[1] Այսուհետ՝ Ուսանողական խորհուրդ:
[2] Այսուհետ՝ Քոլեջ:
[3] Այսուհետ՝ Ընդհանուր ժողով:

6) նպաստել ուսանողների ուսման և ժամանցի համար բարենպաստ միջավայրի ապահովմանը,

7) իրականացնել կրթական, մշակութային, հոգևոր, բնապահպանական, սպորտային-առողջարարական, սոցիալական, բարեգործական ծրագրեր, ինչպես նաև մասնակցել այդպիսի ծրագրերում,

8) ապահովել ուսանողների ներգրավվածությունը Քոլեջի կրթական, մշակութային, հոգևոր, բնապահպանական, սպորտային-առողջարարական, սոցիալական, բարեգործական միջոցառումներին,

9) Քոլեջի ղեկավար մարմիններին ներկայացնել ուսանողների խնդիրները, բողոքները և առաջարկությունները,

10) մշակել և Քոլեջի ղեկավար մարմիններին ներկայացնել ուսանողական կյանքին և կրթական գործընթացներին առնչող հարցեր, որոշումների նախագծեր, նպաստել դրանց ընդունմանը և իրականացմանը,

11) հաստատել ատրաքին կապեր և գործնական փոխհարաբերություններ ՀՀ և օտարերկրյա ուսանողական, երիտասարդական, ինչպես նաև կրության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտում գործող կազմակերպությունների հետ,

12) ներգրավել ուսանողներին Ուսանողական խորհրդի գործունեությանը,

13) սույն կանոնադրության նպատակներից բխող այլ խնդիրներ:

## III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

10. Ընդհանուր ժողովը Քոլեջի ուսանողական բարձրագույն մարմինն է:

11. Ընդհանուր ժողովին կարող է մասնակցել Քոլեջի յուրաքանչյուր ուսանող:

12. Ընդհանուր ժողովը՝

1) ՀՀ օրենսդրությամբ ուսանողներին վերապահված գործունեության ոլորտներին, շրջանակներին, սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղությունները,

2) լսում է Ուսանողական խորհրդի և ստորաբաժանումների հաշվետվությունները, գնահատում է գործունեության արդյունքները,

3) քննում է հարցեր՝ ներկայացված Ուսանողական խորհրդի, Քոլեջի ուսանողների 1/3-ի, Քոլեջի ղեկավարության կողմից,

4) ընտրում է և պարտականությունների կատարումից ազատում է Ուսանողական խորհրդի անդամներին,

5) ընտրում է և պարտականությունների կատարումից ազատում է Հաշվիչ հանձնաժողովի անդամներին,

6) ընտրում է Քոլեջի կառավարման խորհրդում ուսանողության ներկայացուցիչների եկնածուներին,

7) սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ ընդունում է որոշումներ,

13. Ընդհանուր ժողովը գումարվում է տարին մեկ պարբերականությամբ, ինչպես նաև սույն կանոնադրության 12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում:

## IV. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14. Ուսանողական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է՝ ելնելով սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներից և խնդիրներից:

15. Ուսանողական խորհուրդը գործում է նիստերի և միջոցառումների միջոցով:

16. Ուսանողական խորհուրդն ընդունում է իր Գործունեության ներքին կարգապահական կանոնները:

17. Ուսանողական խորհուրդը կազմված է նվազագույնը 7 և առավելագույնը 15 անդամից:

18. Ուսանողական խորհուրդն առաջարկություններ է ներկայացնում Ընդհանուր ժողովին իր գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

20. Ուսանողական խորհրդի գործունեությունը ղեկավարում է Ուսանողական խորհրդի նախագահը[4]:

21. Նախագահը՝

1) հանդես է գալիս Ուսանողական խորհրդի անունից,

2) կատարում է Ուսանողական խորհրդի աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը,

3) կատարում է Ուսանողական խորհրդի աշխատանքների բաշխումն անդամների միջև՝ վերջիններիս համաձայնությամբ,

4) Ուսանողական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ուսանողական խորհրդի տարեկան աշխատանքային պլանը՝ կազմված Ընդհանուր ժողովի կողմից սահմանված՝ գործունեության ուղղությունների հիման վրա:

5) վարում է Ուսանողական խորհրդի նիստերը և ապահովում է արձանագրությունների կազմումը և հրապարակումը,

6) ապահովում է Ընդհանուր ժողովի, Ուսանողական խորհրդի, Հաշվիչ հանձնաժողովի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի պահպանումը,

7) Ուսանողական խորհրդի անդամների նկատմամբ նշանակում է կարգապահական տույժեր, /զգուշացում, նկատողություն, գործունեության կասեցում և պարտականությունների կատարումից ազատելու առաջարկության ներկայացում Ընդհանուր ժողովին, երկու ամիս արանքները/

8) կազմում և Ընդհանուր ժողովին է ներկայացնում Ուսանողական խորհրդի գործունեության մասին հաշվետվություններ՝ տարեկան, ինչպես նաև Ընդհանուր ժողովի պահանջով:

9) իրականացնում է Ընդհանուր ժողովների կազմակերպումը, օրակարգի ձևավորումը, վարումը և ապահովում է արձանագրությունների կազմումը և հրապարակումը,

10) կատարում է Ուսանողական խորհրդի կառուցվածքում ձևավորված ստորաբաժանումների գործունեության ընդհանուր համակարգումը,

11) պատասխանատու է Ուսանողական խորհրդին ամրացված կամ օգտագործման հանձնված գույքի պահպանության նկատմամբ:

12) իրականացվում է սույն կանոնադրության նպատակներից և խնդիրներից բխող այլ գործառույթներ:

22. Նախագահի տեղակալը՝

1) գործում է նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված բնագավառներում,

2) Նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում՝ փոխարինում է նրան և իրականացնում է նախագահին վերապահված գործառույթները,

3) Նախագահի կողմից իր պարտականությունների կատարամ անհնարինության դեպքում՝ իրականացնում է նախագահին վերապահված գործառույթները՝ մինչև նոր ընտրությունների անցկացումը:

19. Գործունեության ծավալներով պայմանավորված՝ Ուսանողական խորհրդն իր կառուցվածքում կարող է ձևավորել մշտական կամ ժամանակավոր ստորաբաժանումներ (հանձնաժողով, աշխատանային խումբ, ակումբ և այլն) սահմանելով դրանց գործունեության բնագավառները և շրջանակները, և լուծարել դրանք:

23. Ստորաբաժանումները՝

1) իրականացնում են Ուսանողական խորհրդի կողմից սահմանած գործունեություն,

2) կազմում և Ընդհանուր ժողովին են ներկայացնում՝ իրենց գործունեության մասին հաշվետվություններ՝ տարեկան, ինչպես նաև Ընդհանուր ժողովի պահանջով,

---

[4] այսուհետ՝ նախագահ:

24. Յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքներում կարող է ներգրավվել Քոլեջի ցանկացած ուսանող:

25. Ստորաբաժանումների աշխատանքներում պարտադիր ներգրավված է Ուսանողական խորհրդի առնվազն մեկ անդամ, ով համակարգում է ստորաբաժանումների աշխատանքները:

26. Ստորաբաժանումների գործունեությունը կազմակերպվում է՝ համաձայն Ուսանողական խորհրդի նեքին կարգապահական կանոնների:

## V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

28. Ուսանողական խորհրդի նիստերն անցկացվում են երկու ամիսը մեկ անգամ:

29. Ուսանողական խորհրդի անդամների անմիջական մասնակցությամբ անցկացնելու անհնարինության դեպքում՝ Ուսանողական խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև առցանց եղանակով՝ բացառությամբ Ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունների:

30. Ուսանողական խորհրդի նիստում կարող է քննարկվել ուսանողների շահերին վերաբերող և սույն կանոնադրությամբ Ուսանողական խորհրդի իրավասությանը վերապահված ցանկացած հարց:

31. Ուսանողական խորհրդի նիստը հրավիրում և վարում է նախագահը:

32. Ուսանողական խորհրդի նիստերը դռնբաց են: Դռնփակ նիստեր կամ առանձին հարցերի դռնփակ քննարկումներ կարող են անցկացվել՝ նիստին ներկա անդամների ձայների 3/2-ի որոշմամբ:

33. Ուսանողական խորհրդի հերթական նիստի մասին հայտարարությունը հրապարակվում է նիստի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ: Հայտարարության մեջ նշվում է նիստի անցկացման օրը, ժամը, վայրը և առաջարկվում է 10-օրյա ժամկետում հարցեր ներկայացնել՝ նիստի օրակարգում ներառելու համար:

34. Ուսանողական խորհրդի նիստի օրակարգի նախագիծը ձևավորում է Նախագահը՝ Ուսանողական խորհրդի անդամների, Քոլեջի ուսանողների, նրանց ծնողների, Քոլեջի ղեկավարության, դասախոսների և այլ աշխատակիցների, շրջանավարտների, լայն հանրության ներկայացուցիչների կողմից նախագահին գրավոր հարցերից՝ ներկայացրած նիստի մասին հայտարարությունը հրապարակելուց հետո 10-օրյա ժամկետում: Հարցի հեղինակը ներկայացնում է հարցի վերաբերյալ նյութեր՝ առկայության դեպքում, և նշում է իր առաջադրած հարցի քննարկումը դռնբաց կամ դռնփակ քննարկելու նախապատվության մասին:

35. Ուսանողական խորհրդի նիստի անցկացման օրվանից 5 օր առաջ՝ Նախագահը հրապարակում է նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման օրը, ժամը, վայրը: Հայտարարությունում նշվում է օրակարգի հարցերի վերաբերյալ նյութերի և դրանք ստանալու հնարավորության մասին (առկայության դեպքում):

36. Ուսանողական խորհրդին տրամադրված՝ նիստի հետ կապված նյութերը, եթե դրանք քննարկվելու են դռնբաց, պետք է ըստ պահանջի տրամադրվեն ցանկացած անձի:

37. Ուսանողական խորհրդի որոշմամբ՝ նիստին կարող են մասնակցել հրավիրյալ անձինք:

38. Նախագահը Ուսանողական խորհրդի նիստի մասին հատուկ իրազեկում է Ուսանողական խորհրդի անդամներին, նիստի օրակարգի նախագծում ներառված հարցերի հեղինակներին և հրավիրյալներին:

39. Ուսանողական խորհրդի նիստի օրակարգը հաստատվում է նիստին՝ Ուսանողական խորհրդի որոշմամբ:

40. Ուսանողական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Ուսանողական խորհրդի անդամների թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են նիստին ներկայացած անդամները:

41. Ուսանողական խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ և նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում՝ որոշիչ է Նախագահի ձայնը:

42. Ուսանողական խորհրդի որոշման մեջ նշվում են որոշմանը կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած անդամների ազգանունները:

43. Ուսանողական խորհրդի նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը: Նիստին ներկա Ուսանողական խորհրդի անդամների որոշմամբ՝ նիստը կարող է ընդհատվել: Նիստին ներկա Ուսանողական խորհրդի

անդամների որոշմամբ՝ նիստը կարող է տեղափոխվել կամ առանձին հարցերի քննարկումը կարող է հետաձգվել մինչև նիստը շարունակելու անհնարինության դեպքերում:

4. Ուսանողական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրություններն ստորագրում են նիստին ներկա Ուսանողական խորհրդի անդամները:

5. Ուսանողական խորհրդի նիստի արձանագրությունը հրապարակվում է 3-օրյա ժամկետում:

7. Ուսանողական խորհրդի նիստի մասին և արձանագրության հրապարակումն իրականացվում է Քոլեջում հայտարարությունների համար հատկացված տեղում փակցնելու, իսկ առցանց նիստերի դեպքում՝ նաև Քոլեջի պաշտոնական համացանցային կայքում և սոցիալական էջում հրապարակելու միջոցով:

8. Ուսանողական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ուսանողական խորհրդի անդամների, Քոլեջի ուսանողների, նրանց ծնողների, Քոլեջի ղեկավարության, դասախոսների և այլ աշխատակիցների պահանջով:

9. Ուսանողական խորհրդի արտահերթ նիստը կայանում է հրավիրողի օրակարգի նախագծով: Հրավիրողը արտահերթ նիստի հայտը ներկայացնելիս՝ նախագահին փոխանցում է նիստի հետ կապված անհրաժեշտ նյութերը՝ առկայության դեպքում:

10. Նախագահը հրապարակում է Ուսանողական խորհրդի արտահերթ նիստի օրակարգի նախագիծը՝ հայտն ստանալուց հետո 1-օրյա ժամկետում:

11. Ուսանողական խորհրդի արտահերթ նիստը կայանում է հայտը ներկայացնելուց հետո 3-օրյա ժամկետում:

12. Ուսանողական խորհրդի արտահերթ նիստի մասին իրազեկումը և անցկացումն իրականացվում են հերթական նիստի համար սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով 46, 47, 48, 49 հոդվածների առանձնահատկությունները:

13. Ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը ձևավորում է Ուսանողական խորհուրդը:

14. Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ժողովին ներկա է Քոլեջի ուսանողության թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում ժողովի իրավազորությունը, ապա ժողովի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Նախագահը և Հաշվիչ հանձնաժողովը:

15. Ուսանողական խորհրդի անդամի ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Ընդհանուր ժողովի այլ որոշումներ ընդունվում են բաց քվեարկությամբ:

16. Ընդհանուր ժողովի մասին իրազեկումը և անցկացումն իրականացվում են Ուսանողական խորհրդի նիստի համար սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով 53, 54, 55 հոդվածների առանձնահատկությունները:

## VI. ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

17. Ընդհանուր ժողովի քվեարկությունները կազմակերպում է Հաշվիչ հանձնաժողովը:

18. Հաշվիչ հանձնաժողովը կազմված է 6 անդամից: Հաշվիչ հանձնաժողովի անդամներն ընդրվում են Ընդհանուր ժողովի կողմից ժողովին ներկա ուսանողների կազմից՝ բաց քվեարկությամբ:

17. Հաշվիչ հանձնաժողովի անդամների միջև գործառույթները բաշխվում են փոխհամաձայնությամբ:

19. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն իրենց ստորագրությամբ հաստատում են Ընդհանուր ժողովի արձանագրությունները:

## VII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

20. Քոլեջի կառավարման խորհրդի կազմում ուսանողության ներկայացուցիչների թեկնածուների ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ առաջադրմամբ:

62. Ուսանողական խորհրդի անդամի թեկնածուների ընտրությունների ժամանակ քվեարկելու իրավունք ունի տվյալ Ընդհանուր ժողովին ներկա Քոլեջի ուսանող հանդիսացող յուրաքանչյուր անձ:

63. Ընտրություններն անցկացվում են ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի՝ պարտադրելու ուսանողին քվեարկելու որևէ թեկնածուի օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

64. Ուսանողական խորհրդի անդամի թեկնածուների ընտրությունն անցկացվում է ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրության գաղտնիությունը խախտած ուսանողին արգելվում է քվեարկել, և նա հեռացվում է ընտրություններից:

65. Ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են հրապարակայնորեն:

66. Ընտրություններին մասնակցող թեկնածուները կարող են ներկայացնել իրենց նախընտրական ծրագրերը Ուսանողական խորհրդին՝ Քոլեջի պաշտոնական համացանցային կայքում և սոցիալական էջում տեղադրելու համար: Ուսանողական խորհուրդն այդ ծրագրերը տեղադրում է ներկայացվելուց հետո1-օրյա ժամկետում:

67. Ընտրությունների անցկացման օրվանից 15 օր առաջ՝ Ուսանողական խորհուրդը հրապարակում է ընտրությունների մասին հարց պարունակող հայտարարությունը՝ նշելով անցկացման օրը, վայրը, ժամանակը:

68. Ընտրությունների անցկացման օրն Ուսանողական խորհուրդն ապահովում է ընտրությունների տեխնիկական նախապատրաստումը և ավարտում է նախապատրաստական աշխատանքներն ընտրության անցկացումից առնվազն 1 ժամ առաջ.

1) ընտրության վայրում տեղադրում է 3 քվեասեղան՝ իրարից 3 մետր հեռավորությամբ,

1) քվեասեղաններին դրնում է 2-ական նույն գրիչներից,

1) ապահովում է 3 արկղ,

1) ապահովում է A4 ձևաչափի սպիտակ թղթեր,

1) ապահովում է համակարգչային տեխնիկա և տպիչ սարքեր՝ քվեաթերթիկների տպագրության համար:

69. Ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխումն ընտրության անցկացման ժամանակ.

70. Ընտրություններն իրականացվում են հետևյալ կարգով՝

1) Նախագահի հրահանգավորմամբ՝ Ընտրության մասնակից ուսանողներն առանձնացվում են խմբերով:

1) Ընտրական հանձնաժողովի 1-ին և 2-րդ անդամները միասին հաշվում են ընտրության մասնակիցների թվաքանակը՝ ըստ խմբերի: 1-ին և 2-րդ անդամները՝ յուրաքանչյուրն առանձին, կատարում են հաշվարկը, գրառում են թվերը: Յուրաքանչյուր խումբըհաշվելուց հետո՝ համեմատում են գրառումները՝ ստուգելու համար թվերի ճշգրտությունը: Ընտրողների վերջնական թվաքանակը հայտնում են 3-րդ անդամին:

1) Ընտրողները բարձրաձայն առաջադրում են թեկնածուների: Առաջադրման քանակը սահմանափակ չէ:

1) Ընտրական հանձնաժողովի 3-րդ անդամը մուտքագրում է առաջադրված թեկնածուների անունները սահմանված ձևի թվեաթերթիկների մեջ, որից հետո տպում է քվեթերթիկները՝ ընտրության մասնակիցների քանակության համապատասխան:

1) Ընտրական հանձնաժողովի 4-րդ անդամն իրականացնում է տպած քվեաթերթիկների հաշվարկը և բաշխումը երեք մասի, որից հետո հանձնում է դրանք քվեասեղանների մոտ կանգնած Ընտրական հանձնաժողովի 5-րդ, 6-րդ, 7-րդ անդամներին, որոնք լուռ կանգնած են քվեասեղանից 2 մետր հեռավորության վրա՝ մեջքով քվեասեղանին և դեմքով մոտեցող ընտրողին:

1) Ընտրական հանձնաժողովի 5-րդ, 6-րդ, 7-րդ անդամները տալիս են մեկական քվեաթերթիկ քվեասեղանին մոտեցող ընտրողներին:

Ընտրական հանձնաժողովի 1-ին, 2-րդ, 4-րդ անդամներն իրականացնում են սահմանված կարգին ընտրության ընթացքի համապատասխանության վերահսկողություն հետևելով հեռավորության վրա և ըստ անհրաժեշտության հիշեցնելով ընտրողներին ընտության կարգը:

) Նախագահը իրականացնում է Հանձնաժողովի անդամների բոլոր գործողությունների հրահանգավորումները:

) Ընտրության ողջ ընթացքում Նախագահը ընտրողներին տեղեկացնում է ընտրական բոլոր գործողությունների մասին:

71.

51. Հաշվիչ հանձնաժողովի կողմից ձայների հաշվարկը կատարվում է քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի համար առանձին:

51. Պահանջի խախտմամբ լրացված քվեարկության քվեաթերթիկները համարվում են անվավեր, և դրանցում առկա հարցերի վերաբերյալ ձայները չեն հաշվվում:

51. Քվեարկության արդյունքների արձանագրությունները ընդհանուր ժողովի արձանագրությունների անբաժանելի մասն են:

51. Ընդհանուր ժողովի ընդունած որոշումները և քվեարկության արդյունքները հայտարարվում են:

61. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն ստորագրվում են քվեարկության արդյունքների հիման վրա կազմված արձանագրությունները: Քվեարկության արդյունքների արձանագրությունները կազմվում են Ընդհանուր ժողովի աշխատանքների ավարտից հետո 3-օրյա ժամկետում:

61. Ընդհանուր ժողովի մասնակից ցանկացած ուսանող իրավունք ունի ներկա գտնվելու քվեաթերթիկների միջոցով իրականացված քվեարկության արդյունքների հաշվարկին և քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելուն, ինչպես նաև հատուկ կարծիք ավելացնել սույն արձանագրության մեջ:

## VII. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼԸ

11. Ուսանողական խորհուրդը ձևավորվում է ուղղակի ընտրությունների սկզբունքով:

11. Ուսանողական խորհրդի անդամ կարող է լինել Քոլեջի յուրաքանչյուր ուսանող:

## VIII. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՒՅՔԸ

37. Ուսանողական խորհրդի գույքը ձևավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Քոլեջի կողմից Ուսանողական խորհրդի օգտագործմանը հանձնված (ամրացված) և այլ աղբյուրներից ձեռքբերված գույքից:

38. Քոլեջի կողմից հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Քոլեջը:

40. Ուսանողական խորհրդի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով: Գնումների գործընթացը համակարգում է Քոլեջը: